



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
YEREVAN STATE UNIVERSITY

---

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО  
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

## **СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ**

### **COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS**

#### **1.1 (27)**

##### **Естественные и физико-математические науки**

(География и геология, информатика и прикладная математика,  
биология, химия, фармацевтика, физика и радиопизика)

##### **Natural and Physical-Mathematical Sciences**

(Geography and Geology, Informatics and Applied Mathematics,  
Biology, Chemistry, Pharmacy, Physics and Radiophysics)

ЕРЕВАН - YEREVAN  
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS  
2019

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ISSN 1829-4367

# ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

## 1.1 (27)

### **Բնական և ֆիզիկամաթեմատիկական գիտություններ**

(աշխարհագրություն և երկրաբանություն, ինֆորմատիկա և կիրառական  
մաթեմատիկա, կենսաբանություն, քիմիա, ֆարմացիա, ֆիզիկա և ռադիոֆիզիկա)

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2019

**Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ**  
**Издаётся по решению Ученого совета ЕГУ**  
**Published by the resolution of the Academic Council of YSU**

**Խմբագրական խորհուրդ՝**

ա.գ.դ., պրոֆ. Թ. Վարդանյան  
կ.գ.դ., պրոֆ. Լ. Նավասարդյան  
ֆ.մ.գ.դ., պրոֆ. Ռ. Ալավերդյան  
ֆ.բ.գ.դ., դոց. Ա. Բալաբեկյան  
ֆ.մ.գ.դ., դոց. Ե. Մամասախլիսով  
ֆ.մ.գ.դ., դոց. Տ. Հակոբյան  
ա.գ.թ., դոց. Ս. Սուվարյան  
ա.գ.թ., դոց. Գ. Ալեքսանյան  
Ե.գ.թ., դոց. Մ. Գրիգորյան  
կ.գ.թ., դոց. Հ. Փանոսյան  
տ.գ.թ., դոց. Հ. Հարոյան  
ֆ.մ.գ.թ., դոց. Ս. Մխիթարյան  
ք.գ.թ., դոց. Ի. Ալեքսանյան  
ք.գ.թ., դոց. Ա. Մարտիրոսյան  
ֆ.մ.գ.թ., ասիստ. Ա. Մանասեյան  
ֆ.մ.գ.թ., ասիստ. Ա. Վարդանյան  
ֆ.մ.գ.թ. Մ. Ալեքսանյան  
ֆ.մ.գ.թ. Տ. Աբրահամյան

**Редакционная коллегия:**

д.г.н., проф. Т. Ваданян  
д.б.н., проф. Л. Навасардян  
д.ф.м.н., проф. Р. Алавердян  
д.ф.м.н., доц. А. Балабекян  
д.ф.м.н., доц. Е. Мамасакхлисов  
д.ф.м.н., доц. Т. Акобян  
к.г.н., доц. С. Суварян  
к.г.н., доц. Г. Алексанян  
к.г.н., доц. М. Григорян  
к.б.н., доц. О. Паносян  
к.т.н., доц. О. Ароян  
к.ф.м.н., доц. С. Мхитарян  
к.х.н., доц. И. Алексанян  
к.х.н., доц. А. Мартирян  
к.ф.м.н., ассист. А. Манаселян  
к.ф.м.н., ассист. А. Ваданян  
к.ф.м.н. М. Алексанян  
к.ф.м.н. Т. Абрамян

**Editorial Board**

DSc, Prof. T. Vardanyan  
DSc, Prof. L. Navasardyan  
DSc, Prof. R. Alaverdyan  
DSc, Associate Prof. A. Balabekyan  
DSc, Associate Prof. Y. Mamasakhlov  
DSc, Associate Prof. T. Hakobyan  
PhD, Associate Prof. S. Suvaryan  
PhD, Associate Prof. G. Aleksanyan  
PhD, Associate Prof. M. Grigoryan  
PhD, Associate Prof. H. Panosyan  
PhD, Associate Prof. H. Haroyan  
PhD, Associate Prof. S. Mkhitarian  
PhD, Associate Prof. I. Aleksanyan  
PhD, Associate Prof. A. Martiryan  
PhD, Assistant Prof. A. Manaselyan  
PhD, Assistant Prof. A. Vardanyan  
PhD M. Aleksanyan  
PhD T. Abrahamyan

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն  
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55 55 70, publishing@ysu.am

Հրատարակության նախապատրաստող ստորաբաժանում՝ ԵՊՀ ՈՒԳԸ  
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 60) 71 01 94,  
Էլ. փոստ՝ sss@ysu.am  
ԵՊՀ ՈՒԳԸ հրատարակումների կայք՝ www.ssspub.y-su.am.

## Գևորգյան Շամամ

ԵՊՀ, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ, ասպիրանտ  
Գիտական ղեկավար՝ ա.գ.դ., պրոֆ. Ա. Ավագյան  
Էլ. փոստ՝ [shamamgevorgyan@gmail.com](mailto:shamamgevorgyan@gmail.com)

### **ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԿՈՌՊԵՐԱՏԻՎՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԿԱՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԴԵՍՏԻՆԱՑԻԱՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋՈՑ**

Զբոսաշրջային կոոպերատիվները, որոնք լայնորեն տարածված են հատկապես եվրոպական երկրներում, ԱՄՆ-ում ու Կանադայում, կոոպերատիվի նոր ձևեր են, որոնք հստակ նպատակ են հետապնդում բարելավելու կոլեկտիվ օգուտները: Աշխատանքի նպատակն է ցույց տալ զբոսաշրջային կոոպերատիվների ստեղծման անհրաժեշտությունը հանուն զբոսաշրջային դեստինացիաների կայուն կառավարման հզորացման՝ կոոպերատիվի և կայունության սկզբունքների համատեղելիության և փոխշահավետության ներկայացման միջոցով:

Կոոպերատիվները գոյություն ունեն շուրջ երկու հարյուր տարի: Գործելով տնտեսական գործունեության բոլոր ոլորտներում՝ կոոպերատիվներն ավելի կայուն են ու երկարակյաց, քան ներդրողամետ ընկերությունները: Կոոպերատիվ մոդելը մշտապես հարմարվել է փոփոխվող պայմաններին, և տնտեսական ու սոցիալական նորանոր խնդիրներին լուծում տալու համար առաջացել են կոոպերացիայի նորարարական ձևեր:

Համաձայն վերջին գնահատումների՝ աշխարհում կոոպերատիվներն ավելի քան 279 մլն բնակչության համար եկամտի աղբյուր են. աշխատունակ բնակչության գրեթե 10 %-ն՝ առանց հաշվի առնելով առաջացած լրացուցիչ անուղղակի աշխատատեղերը [3]:

Կոոպերատիվների հաջողության և երկարակեցության հիմնական պատճառն այն է, որ դրանք շահագրգռված են ոչ թե առավելագույնի հասցնելու ներդրողների շահույթը, այլ բավարարելու համայնքի կարիքները: Կոոպերատիվներին պետք է վերաբերել որպես հիմնախնդիրների համատեղ (կոլեկտիվ) լուծողների:

Շուկայամետ բարեփոխումների, սեփականաշնորհման և ապակենտրոնացման ներկայիս միտումների ազդեցության ներքո կոոպերատիվն իրավացիորեն դիտվում է որպես համայնքային տնտեսական նախաձեռնությունները կյանքի կոչող, կայուն զարգացում և արդյունավետ կառավարում իրականացնելու ամենահարմար կազմակերպական ձևը:

<p><b>ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 117, հիմնական դրույթներ կոոպերատիվների մասին</b></p>	<p>Կոոպերատիվ է համարվում քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության վրա հիմնված ու իր անդամների գույքային մասնաբաժինների միավորման միջոցով մասնակիցների նյութական և այլ կարիքների բավարարման նպատակով ստեղծված կամավոր միավորումը [7]:</p>
<p><b>Աշխատանքի միջազգային կազմակերպություն (ԿՄԴ՝ Կոոպերատիվների միջազգային դաշնություն )</b></p>	<p>Կոոպերատիվը մարդկանց ինքնավար ընկերակցություն է, որոնք կամավոր կերպով միավորվում են՝ համատեղ սեփականություն հանդիսացող և ժողովրդավարական ձևով վերահսկվող ձեռնարկության միջոցով տնտեսական, սոցիալական և մշակութային ընդհանուր կարիքներն ու ձգտումները բավարարելու համար [11]:</p>
<p><b>Կոոպերատիվների միջազգային դաշնություն (International Cooperative Alliance)</b></p>	<p>Կոոպերատիվը ապրանքներ և ծառայություններ արտադրելու և մատակարարելու նպատակով կամավոր սկզբունքով ստեղծված տնտեսական միավոր է, որի անդամներն իրականացնում են կառավարումը և համատեղ բաժանում առաջացած ռիսկերն ու շահույթը [11]:</p>
<p><b>Ուոուտյան Վ., Ավետիսյան Ա. Գյուղատնտեսական կոոպերատիվներ</b></p>	<p>Կոոպերատիվում համատեղ աշխատանքը, նվազեցնելով շուկայական տարբեր ռիսկերը, հզորացնում է մարդկանց ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական կարողությունը [1]:</p>

**Աղյուսակ 1.** Կոոպերատիվ հասկացության սահմանումն՝ ըստ տարբեր աղբյուրների

Վերոնշյալ սահմանումները ձևակերպվել են՝ մատնանշելու կոոպերատիվների գործունեության հիմնական դրույթները և ամփոփելու առաջնային նպատակները: Սակայն կոոպերատիվ գործունեության առաքելության ընկալման համար նպատակահարմար է ուսումնասիրել կոոպերատիվների՝ Կոոպերատիվների միջազգային դաշնության 1995 թ. հռչակած հետևյալ սկզբունքները.

**1. Կամավոր և բաց անդամություն:** Կոոպերատիվները կամավոր հիմքի վրա ստեղծված կազմակերպություններ են, որոնք բաց են բոլոր այն անձանց համար, ովքեր ի վիճակի են ստանալ կոոպերատիվների ծառայությունները և պատրաստվում են պարտավորություններ ստանձնել որպես անդամ՝ առանց սեռային, սոցիալական, ռասսայական, քաղաքական կամ կրոնական որևէ խտրականության:

**2. Ժողովրդավար վերահսկողություն:** Կոոպերատիվն իր անդամների կողմից վերահսկվող ժողովրդավարական կազմակերպություն է: Անդամներն ակտիվորեն

մասնակցում են կոոպերատիվի քաղաքականության մշակման ու որոշումների կայացման գործընթացին: Անդամների մեծ թվաքանակ ունեցող կոոպերատիվներում անմիջական վերահսկողությունն իրականացնում են որոշակի կանոնակարգով ընտրված ներկայացուցիչները, ովքեր հաշվետու են կոոպերատիվի անդամների առջև: Որպես կանոն, կոոպերատիվներում անդամներն ունեն հավասար ձայնի իրավունք՝ անկախ մասնաբաժինների քանակից (մեկ անդամ, մեկ ձայն):

**3. Անդամների տնտեսական մասնակցություն:** Կոոպերատիվի անդամները նպաստում են կոոպերատիվի ունեցվածքի ձևավորմանը և հավասար իրավունքներ ունեն դրա օգտագործման նկատմամբ: Այդ ունեցվածքի առնվազն մի մասը կոոպերատիվի ընդհանուր սեփականությունն է:

**4. Ինքնավարություն և անկախություն:** Կոոպերատիվներն իրենց անդամների կողմից վերահսկվող ինքնավար կազմակերպություններ են: Եթե կոոպերատիվը պայմանագրային հարաբերությունների մեջ է մտնում այլ կազմակերպությունների, այդ թվում՝ պետության հետ, ապա դա արվում է կոոպերատիվի ինքնավարությունն ու անկախությունը պահպանելու պայմանով:

**5. Կրթություն, վերապատրաստում և տեղեկատվություն:** Կոոպերատիվները կրթություն և վերապատրաստում են ապահովում իրենց անդամների, ընտրված ներկայացուցիչների, ղեկավարների և աշխատողների համար, որպեսզի վերջիններս կարողանան նպաստել իրենց կոոպերատիվի զարգացմանը: Նրանք հանրությանը, մասնավորապես՝ երիտասարդությանը, և նրանց, ում կարծիքը կարևորում են, տեղեկացնում են կոոպերացիայի բնույթի և օգուտների մասին:

**6. Փոխգործակցություն կոոպերատիվների միջև:** Կոոպերատիվներն իրենց անդամներին առավել արդյունավետ ծառայելու և կոոպերատիվական շարժումը հզորացնելու նպատակով համագործակցում են տեղական, ազգային, տարածաշրջանային և միջազգային համանման կառույցների հետ:

**7. Համայնքի մասին մտահոգություն:** Կոոպերատիվներն աշխատում են հանուն իրենց համայնքների կայուն զարգացման՝ համաձայն անդամների հաստատած քաղաքականության [6]:

Ամփոփելով կոոպերատիվների վերաբերյալ առաջ քաշված սկզբունքներն ու սահմանումները՝ հասկանում ենք, որ վերջիններս առանձնապես տնտեսական միավորներ են, որոնց ստեղծման ու արդյունավետ գործունեության գրավականն անդամակենտրոն, ժողովրդավար կառավարումն է: Ի տարբերություն բաժնետիրական ընկերությունների, որոնք կապիտալակենտրոն, ներդրողամետ և ներդրումային հարաբերություններով պայմանավորված ընկերություններ են, կոոպերատիվները մարդակենտրոն, անդամօգտագործողների վրա հիմնված և վերջիններիս հետ գործարքային հարաբերություններով պայմանավորված ընկերություններ են: Բաժնետեր-ներդրողը կարող է չլինել բաժնետիրական ընկերության ապրանքների կամ ծառայությունների գնորդը կամ օգտվողը: Կոոպերատիվների դեպքում սա շատ

կարևոր կառուցվածքային տարր է. անդամները կոոպերատիվ ծառայությունների հիմնական օգտագործողներն են: Կոոպերատիվները, որպես տնտեսական կազմակերպություններ, պետք է ապահովեն տնտեսական դրական արդյունք: Սակայն դրանց նպատակը ոչ թե հենց այդ դրական արդյունքի ապահովումն է, այլ դրա միջոցով իրենց անդամների տնտեսական, սոցիալական և մշակութային ընդհանուր կարիքների բավարարումը [1]: Զբոսաշրջության ոլորտը, որպես համաշխարհային տնտեսության ոչ արտադրական ոլորտի առանցքային բաղադրիչ, ապահովում է աշխարհի ՀՆԱ-ի 10.2 %-ը կամ տարեկան 7.613.3 մլրդ դոլարի եկամուտ [5]: Սակայն ՄԱԿ-ի Զբոսաշրջային միջազգային կազմակերպության տվյալների համաձայն CO2 գազի արտանետումների 5 %-ը բաժին է հասնում զբոսաշրջության ոլորտին: Մասսայական զբոսաշրջությունը առաջ է քաշել նաև սոցիալական և մշակութային միջառք խնդիրներ, որոնց լուծումները պահանջում են կիրառել համալիր մոտեցումներ: Դեռևս 25 տարի առաջ, երբ Ռիո դե Ժանեյրոյի Երկրի գագաթնաժողովի ժամանակ առաջ քաշվեց կայուն զբոսաշրջության գաղափարը, պարզ դարձավ, որ հիմնավոր փոփոխություններ են անհրաժեշտ ճանապարհորդությունների վերաբերյալ մեր մոտեցումներում: Որպեսզի զբոսաշրջային գործունեության կայունությունն ինչ-որ չափով լինի «չափելի», այսինքն կայունության սկզբունքների (տնտեսական շահ, բնապահպանական անաղարտություն, սոցիալական հավասարություն ու արդարություն) ներդրումը զբոսաշրջային գործելակերպի մեջ ակնհայտորեն երևա՝ անհրաժեշտ է այն կիրառել զբոսաշրջության կառավարման որևէ մոդելի վրա:

Զբոսաշրջային դեստինացիաները զբոսաշրջային ինդուստրիայի կարևորագույն բաղադրիչներն են ու այդ ինդուստրիայի գործունեության համակարգի, կառուցվածքի արտահայտման ու ներկայացման գործնական մոդելները: Ըստ Լեյպերի՝ դեստինացիան աշխարհագրական որոշակի սահմաններով տարածք է, որը, պարունակելով գրավչություն ապահովող պայմանների համալիր, կարող է ազդել զբոսաշրջիկի ընտրության վրա և բավարարել նրա պահանջմունքները [4]: Դեստինացիան ուղղակի վայր չէ, որտեղ այցելում են զբոսաշրջիկները, այլ տարածք, որն ապահովում է զբոսաշրջային բնույթի ծառայությունների մատուցման ենթակառուցվածքային համապատասխան ցանց: Դեստինացիաները զբոսաշրջիկների պահանջմունքների բավարարմանը նպատակաուղղված համալիր ծառայությունների մատուցման համակարգային մոտեցում է: Կայուն դեստինացիաները կարելի է ասել նոր ձևավորվող փորձնական մոդելներ են, որոնց ներդրման և գործելաոճի հաղթանակը կբերի ռազմավարական և մարտավարական մշակված մի շարք փորձերի ապացուցմանը և կծառայի որպես պետականորեն վերահսկվող ծրագրի օրինակ: Սակայն ինչպե՞ս պետք է հասնել այդ հաղթանակին. դեստինացիաներ, որոնք, բավարարելով զբոսաշրջիկների հոգևոր-մշակութային պահանջմունքները, կառավարման գործընթացում՝

1. ստանում են տնտեսական շահ՝ արդյունավետորեն ազդելով երկրի տնտեսական աճի ցուցանիշների վրա և գրանցելով արտադրության բարձր մակարդակ,




2. որոշումների կայացման գործընթացում ապահովում են շրջանի սոցիալական պայմանների բարելավում, գործազրկության նվազեցում, զբաղվածության ապահովում, սեռային հավասարաչափ ներգրավվածություն,

3. Չեն խախտում բնության հավասարակշռությունը ձևավորման և գործունեության իրականացման ամբողջ գործընթացի ընթացքում:

Այսպիսով, կայուն զբոսաշրջային դեստինացիաների կառավարման հզորացումը հիմնախնդրային հարց է, որի լուծման բանաձևերի մշակումն օրակարգային հարց է:

Կայուն զբոսաշրջային դեստինացիաների կառավարումը հզորացնելու ամենարդյունավետ լուծումներից է կոոպերատիվների ստեղծումը զբոսաշրջային դեստինացիաներում: Եթե կայուն կառավարվող դեստինացիոն մոդելների երանելի ձևավորումը զբոսաշրջային ինդուստրիայի կայունացմանը նպատակաուղղված գերխնդիր է, ապա զբոսաշրջային կոոպերատիվները գործնական մոդելներ են և իրենց ձեռնարկատիրական գործունեության կառավարման գործընթացում արդեն իսկ առաջնորդվում են կայունության սկզբունքներով: Հենց այստեղ է մատնանշվում զբոսաշրջային դեստինացիաներում կոոպերատիվների ստեղծման անհրաժեշտությունը, որոնք իրենց վրա կվերցնեն կայուն կառավարման ներդրման գործնական փորձի արտահայտման ծանր բեռը:

Զբոսաշրջությունն առանց համապատասխան պլանավորման և կառավարման, կարող է բնապահպանական տեսանկյունից մեծ վնաս հասցնել դեստինացիաներին՝ առաջացնելով սոցիալական և մշակութային մի շարք խնդիրներ ու կոնֆլիկտներ՝ օտարելով զբոսաշրջիկ ընդունող համայնքները: Զբոսաշրջության կայուն զարգացումը կառավարում է զբոսաշրջության ազդեցությունը դեստինացիաների բնական համակարգերի, տնտեսական գործունեությունների ու համայնքի վրա՝ պահպանելով ու մեծացնելով դեստինացիաներում կայուն ռեսուրսօգտագործման ներուժը:



**Գծապատկեր 1.** Դեստինացիաների կայուն կառավարման VICE (visitor, industry, community, environment) մոդել [2]

Գծապատկեր 1-ում պատկերված VICE մոդելը դեստինացիաների կառավարումը ներկայացնում է որպես փոխգործակցություն այցելուների, ծառայություն մատուցող տնտեսության և նրանց ընդունող համայնքի ու բնահամակարգի միջև:

Սույն մոդելն առաջ է քաշում հետևյալ հիմնահարցերի անհրաժեշտությունը, որոնց անպատասխան մնալը կամ թերհամոզումը չեն արդարացնում զբոսաշրջային դեստինացիաներում կառավարման մոդելի ներդրման պահանջը.

- Ինչպե՞ս են որոշումներն ազդելու դեստինացիայի գործառույթային, ամբողջական, առողջ գործունեության վրա:
- Որո՞նք են տնտեսական առնչությունները:
- Ի՞նչ հետևանքներ է այն ունենալու համայնքի անդամների կենսագործունեության վրա:
- Ի՞նչ ազդեցություն է ունենալու այն դեստինացիայի բնական համակարգերի և (կամ) մշակույթի վրա:

Զբոսաշրջային դեստինացիաների կայուն կառավարման VICE մոդելի գաղափարային որդեգրումը պահանջում է գործնական կիրառում: Զբոսաշրջային կոոպերատիվ կառավարման մոդելը ներդրվում է՝ գործնականորեն բավարարելու վերոնշյալ հարցերի պատասխանները:

Կոոպերատիվները, որոնք ստեղծվել են զբոսաշրջային բնույթի ծառայությունների և ապրանքների արտադրության ու մատուցման նպատակով՝ հանուն համայնքի ներկայացուցիչների սոցիալ-մշակութային կարիքների բավարարման ու տնտեսական առաջընթացի, կոչվում են զբոսաշրջային կոոպերատիվներ: Զբոսաշրջային կոոպերատիվները բնույթով ենթարկվում են կոոպերատիվների վերաբերյալ առանձնացված սահմանումներին ու առաջադրված սկզբունքներին: Զբոսաշրջային կոոպերատիվի մոդելը իր գործունեության կառավարման ամբողջ ընթացքում կրում է կայունության սկզբունքները:

**Ինչո՞ւ է անհրաժեշտ բարձրացնել զբոսաշրջային դեստինացիաների կայուն կառավարման արդյունավետությունը կոոպերատիվների կառավարման մոդելի ներդրման միջոցով.** քանի որ զբոսաշրջային դեստինացիաները զբոսաշրջային ինդուստրիայի գործառույթային կարևորագույն օղակն են, ապա դրանց կայուն կառավարումը հատուկ մոտեցումների կիրառում է պահանջում զբոսաշրջային արտադրանքն առավել մրցունակ դարձնելու տեսանկյունից: Կոոպերատիվների կառավարման մոդելը պարունակում է կայունության սկզբունքներ. այն այդ սկզբունքների կիրառելիությունն ապացուցող համակարգ է: Կոոպերատիվական մոդելի ներդրումը կայուն զբոսաշրջային դեստինացիաների կառավարման համակարգում կգործնականացնի և կնյութականացնի կայուն կառավարման գաղափարախոսական բնույթը:

Ասվածից եզրակացնում ենք, որ կոոպերատիվների՝ գոյություն ունեցող կառավարման մոդելը գործնական շոշափելի փորձ կարող է հաղորդել կայուն կառավարման ներդրման գործընթացին:

Պակաս կարևոր չէ այն հանգամանքը, որ զբոսաշրջային կոոպերատիվին անդամակցող, մասնավորապես՝ փոքր ձեռնարկատերերը հնարավորություն են ստանում զբոսաշրջային արտադրանք մատուցելու խոշոր տնտեսավարողներին և բրենդավորված արտադրանք արտադրողներին: Բացի զուտ տնտեսական շարժառիթներից, սա նաև սոցիալ-հոգեբանական տեսանկյունից է դրական ազդեցություն գործում կոոպերատիվի և համայնքի սոցիալական ընդհանուր մթնոլորտի վրա:

Զբոսաշրջային կոոպերատիվ գործունեության շրջանակներն ընդգրկում են՝



**Գծապատկեր 3.** Զբոսաշրջային կոոպերատիվների գործունեության ոլորտները [8]

Ինչպես երևում է վերոնշյալ գծապատկերից, զբոսաշրջային կոոպերատիվների գործունեության ոլորտները բազմազան են ու բազմաֆունկցիոնալ: Զբոսաշրջային կոոպերատիվների գոյությունն ու գործունեությունը զբոսաշրջային դեստինացիայում նվազագույնի են հասցնում դեստինացիայի կառավարագործառնական «պարտականությունները»: ամեն մի կոոպերատիվ, կառավարելով իր գործառնական առանձին ոլորտը, դեստինացիան դարձնում է ինքնակառավարվող օբյեկտ: Սա այն իդեալական պատկերն է, որ պետք է ստանալ, երբ զբոսաշրջային դեստինացիոն համակարգի յուրանքանցյուր բաղադրիչ օժտված լինի ինքնակառավարման հատկանիշներով:

Վերլուծելով զբոսաշրջային կոոպերատիվների գործունեության ոլորտների բազմազանությունը, եզրակացնում ենք, որ զբոսաշրջային կոոպերատիվները կոոպերատիվական գործունեության տնտեսական կարևորագույն բաղադրիչներ են համարվում: Սակայն, հետապնդելով տնտեսական նպատակներ ու շահ, զբոսաշրջային

կոոպերատիվները սոցիալական բնույթ են կրում՝ հավատարիմ մնալով կայուն ռեսուրսօգտագործման սկզբունքներին:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] **Ուռուտյան Վ., Ավետիսյան Ա.**, Գյուղատնտեսական կոոպերատիվներ, Երևան 2011, Ասողիկ, էջ 7:
- [2] A Practical Guide to Tourism Destination Management, World Tourism Organization, Madrid, Spain, 2007.
- [3] Cooperatives and the Future of Work, International Cooperative Alliance, Position Paper, 2018, p. 1.
- [4] **Leiper N.**, Tourism Management, 3<sup>d</sup> ed., Sidney, Pearson Education Australia, 2004.
- [5] Travel & Tourism Economic Impact 2017 World, World Travel and Tourism Council, London, United Kingdom, 2017.
- [6] Statement on the Cooperative Identity, International Cooperative Alliance, 1995, p. 1.
- [7] «Հիմնական դրույթներ կոոպերատիվների մասին», էջ 57,  
URL: <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=74658> (Հղումը կատարվել է՝ 23.05.2018):
- [8] European Route of Cooperative Culture, URL: <http://www.cooproutecoop/> (Accessed: 27.05.2018, 02:45).
- [9] Position paper: Cooperatives and the future of work, International Cooperative Alliance, 30 April, 2018, URL: <https://goo.gl/RFX6Sj> (Accessed: 19.05.2018).
- [10] Cooperatives, ILO-International Labour organization,  
URL: <https://goo.gl/Hvm1vk> (Accessed: 29.05.2018).
- [11] Cooperative identity, values & principles, URL: <https://goo.gl/kuNiXp> (Accessed: 30.05.2018).

Գևորգյան Շամամ

### **ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԿԱՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԴԵՍՏԻՆԱՑԻԱՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋՈՑ**

**Բանալի բառեր՝** կոոպերատիվ, կայունություն, զբոսաշրջային դեստինացիա,  
կառավարում:

Աշխատանքում բացահայտվել են զբոսաշրջային կոոպերատիվների բնույթն ու առանձնահատկությունները, ունեցած դերն ու նշանակությունը զբոսաշրջային ինդուստրիայում:

Աշխատանքի նպատակն է առաջադրել զբոսաշրջային կոոպերատիվների գործարար մոդելի կիրառումը՝ որպես կայուն զբոսաշրջային դեստինացիաների կառավարման հզորացման գործոն:

Արդյունքում եզրակացնում ենք, որ զբոսաշրջային կոոպերատիվները, որպես սոցիալ-ձեռնարկատիրական ընկերություններ, կայուն կառավարման գործնական արտահայտման մոդելներ են, և այդ մոդելների ներդրումը կհանգեցնի կայուն կառավարման գաղափարախոսության նյութականացմանը:

Геворгян Шамам

## **ТУРИСТИЧЕСКИЕ КООПЕРАТИВЫ КАК СПОСОБ УПРАВЛЕНИЯ УСТОЙЧИВЫМИ ТУРИСТСКИМИ ДЕСТИНАЦИЯМИ**

**Ключевые слова:** кооператив, устойчивость, туристская дестинация, управление.

В статье раскрыты сущность и особенности туристических кооперативов, их роль и значение в индустрии туризма.

Целью работы является предложение использования бизнес-модели туристических кооперативов в качестве фактора укрепления управления устойчивых туристских дестинаций.

В результате мы делаем вывод о том, что туристические кооперативы, как социально-предпринимательские компании, являются образцами практического выражения устойчивого управления, и внедрение этих моделей приведет к материализации идеологии устойчивого управления.

Gevorgyan Shamam

## **TOURISM COOPERATIVES AS MEANS OF SUSTAINABLE DESTINATION MANAGEMENT**

**Key words:** cooperative, sustainability, tourist destination, management.

In the article the essence and peculiarities of tourism cooperatives, their role and significance in the tourism industry have been revealed.

The purpose of the work is to suggest using the business model of tourism cooperatives as a factor of strengthening the management of sustainable tourism destinations. As a result, we conclude that tourism cooperatives as socio-entrepreneurial companies are models of practical expression of sustainable management and the introduction of these models will lead to the materialization of sustainable management ideology.